ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2024 թվականի № 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՌՈՒԲԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի № 328-Ա որոշումն՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել ***2024 թվականի հունվարի 10-ին ժամը 11:00-ին*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Միհրոն Սահակյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Լևոն Պետրոսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար,

3) ***Անուշ Ղահրամանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

4) ***Վահագն Նազլոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

5) ***Քնար Ղոնյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ,

6) ***Լուսինե Հայրապետյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչության պետ,

7) ***Դավիթ Հովսեփյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել ***Միսրոն Սահակյանին***, քարտուղար՝ ***Վահագն Նազլոյանին***:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հունվարի 9
ք. Հրազդան